

JEGO NOPIOLOM./ 1927.

Թարգմ.

Ասա հանգչի քսյոնդ (քահանա) Յան (Հովհաննէս) Մարգիրոսովիչը Հայոց կանոնիկոսն ու քարողիչը՝ ապրեց 70 աարի: Վախճանվեց ի տեր 20.12.1926թ.: Հարգանք նրա աճյունին:

1927:

Մ.Բժշկյանի օրոք բաղմաթիվ Հայ ընաանիքներ են ապրել Գորոգենկայում (Սնյաաինից 3 կմ հեռ.), Բերեժանիում, Լիսեցում («Լըշեց») և այլուր<sup>183</sup>: Հիշյալ վայրերում եղած Հայոց կրոնական օջախները սպասարկում էին, իրրե կանոն, Լվովից հրավիրված քահանաները:

#### ԿԱՄԵՆԵՑ-ՊՈԴՈԼՍԿ

Ուկրաինայի այս հինավուրց քաղաքում XIV-XIX դարերի ընթացքում գոյաակած Հայ գաղութը կարենոր գեր է խաղացել լեհահայոց Հոգեոր-մշակութային կյանքում՝ ուահպանելով իր նիսառակացը, ազգային հիմնարկությունները, ընկերությունները:

Հայագեաներից առաջինը Ղ.Ալիշանն էր, որ հասուկ ուսումնասիրության առարկա գաղճ-րեց Լեհաստանի և Ռումինիայի Հայկական գաղթավայրերի կյանքը, հասարակական հարաբերությունների պատամությունը հնադույն ժամանակներից մինչև XIX դարի վերջին ասսամյակ-ները<sup>184</sup>: Անշուշա, մինչև Ղ.Ալիշանի «Կամենից» աշխաաությունը, հրապարակում կազ Մ.Բժշկ-յանի «Ճանապարհորդությունը», ուր վկայված էին բագմաթիվ սկզբնազրյուրներ լեհահայոց գաղթօջախների մասին<sup>185</sup>:

Վերջին ասսամյակներին հայագեաությունը հարսաացավ Վ.Ռ. Գրիգորյանի եանըակշիռ աշխաաություններով, որոնցում բաղմաթիվ սկզբնազրյուրների հիման վրա զաաուշված է հաակապես Կամենիցի Հայոց գաղթօջախի կաաարած մեծ դերը ողջ Պոգոլյեի գարգացած ավաաաաի-րության գարաշրջանի պատամության մեջ<sup>186</sup>:

Ուսումնասիրողների կարծիքով՝ Կամենիցում Հայերն սկսել են ապրել գեռես XII դարի վեր-ջերին. մինչ այդ նրանք բնակվում էին իրենց իսկ հիմնագրած Վելիկին և Մալիի Արմյանե գյուղե-րում, որոնք գանվում են քաղաքից 22 կմ հեռավորությամբ (այժմ կոչվում են Վելիկոդալեսյե և Մալողալեսյե):

Լեհական թագավոր Կաղիմիը Մեծի (1310-1370) հրովարտակով Կամենիցի Հայ աղքա-րնակչությունը ձեռք էր բերել ինքնազարություն<sup>187</sup>, որին վերջ արվեց 1790 թ. փեարկարի 3-ին<sup>188</sup>:

1475 թ., երր թուրքերը գրավեցին Ղրիմի թերակղզին, բագմաթիվ Հայեր աեղափոխվեցին

183 Նույն տեղում:

184 Ղ.Ալիշան, Կամենից. Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումինիոյ հաւաատչեալ յանուածովք, Վենետիկ, Ս.Ղազար, 1896: Այսութեուն՝ Կամենից:

185 Մ.Բժշկյան, Շանպարիորդություն ի Լեհաստան . Վենետիկ, 1830:

186 Վ.Ռ. Գրիգորյան, Կամենից-Պողոլյսկ քաղաքի հայկական դատարանի արձանագրությունները (16-րդ դ.). Երևան, 1963 Առաջին Իстория армянских колоний Украины и Польши /Аրմենի Պոդոլիա/, Երևան, 1980. Հեղինակի բազմաթիվ ուսումնասիրությունների մոտավոր ցանկը տե՛ս ուսերեն այս աշխատութ-յան 258-259 էջերում:

187 Վ.Ռ. Գրիգորյան, Կամենից-Պողոլյսկ..., էջ 32:

188 Նույն տեղում, էջ 42:

Պողոսյան: Այսաեղ եկան նաեւ Հայաստանից, Փոքը Ասիայի հայաշաա վայըբրից, ինչպես նաեւ Մոլդովայից արաագաղթած հոծ զանգվածներ: XVI դարի 60-ական թվականների ավյալներով հայ ընտանիքների քանակը Կամենիցում հասնում էր 900-ի (այլ ավյալներով՝ 1200-ի)<sup>189</sup>:

1575 թ. այսաեղ ապրում էին 300 ընաանիք<sup>190</sup>: Հինգ աաըի հեառ, այսինքն՝ 1580 թվականին, Կամենիցում հաշվում էր 400 ընաանիք<sup>191</sup>:

1672-1699 թթ. Կամենիցն ընկավ թուրքերի տիրապեաության տակ<sup>192</sup>: Մեծապես առևժեցին քաղաքի անխաիր բոլոր խավերը, ընդ որում նաեւ հայերն ու նրանց կրթամշակութային օջախները:

Մ.Բժշկյանի այցելության ժամանակ՝ 1820 թ., Կամենիցում ապրում էր ընդամենը 70 հայ ընտանիք<sup>193</sup>, որոնք ունեին իրենց գպրության և մշակույթի օջախները<sup>194</sup>, մեկ աասնյակի հասնող վանքերն ու եկեղեցիները<sup>195</sup>: Թերես այդ էր պաանաւը, որ Կամենիցը ձեռադիր մաայաններում երբեմն կոչվում էր «Լեհական էջմիածին»<sup>196</sup>: Այսաեղ են ապրել ու գործել ակտնտվոր մաավորականներ՝ ժամանակագիրներ Հովհաննեսը, Օգսենոր, Հակոբը, բանասաեղ Հովհաննես Կամենիցցին՝ «Պաամություն պաաեղաղմին Խօթինու» երկի Հեղինակը, փիլիսոփա և ժամանակագիր Սաեփանոս Ռոշքան (1670-1739) և շաա ուրիշներ<sup>197</sup>:

Կամենիցը հայանի է իր պաշապանական համակարգով՝ հղոր ամրոցով, որի կառուցման գործում եռանգուն մասնակցություն է ունեցել տեղի հայ համայնքը: Երկար աարիներ շարունակ (1768-1785 թթ.) ամրոցի պարեաը հայագի գեներալ-լեյտենանս Յան Դավիդն էր<sup>198</sup>, որն իր ուղամավարական տազանդի ու իիղախության շնորհիվ լեհական րանակի շարքային ղինվորից հասել է զինվորական այդ բարձր ասաիճանին: Ամրոցի պարեաի պաշտոնը այնուհեաե զբաղեցրեց նրա որգին՝ գեներալ-մայոր Յուղեֆ (Հովսեփ) Վիհան (1786-1789)<sup>199</sup>:

Հայերի նվիրվածությունն ու անվեհերությունը բարձր գնահաաանքի արժանացնելով՝ Լե-

189 Նոյն տեղում, էջ 19: Տե՛ս Անա՛ Մ.Բժշկյան, Եշվ.աշխ.. էջ 147, 159-160:

190 Վ.Ռ.Գրիգորյան, Համբարական կազմակերպությունները Պողոսյի հայկական գաղութներում, «Արարեց հասարակական գիտությունների», 1981, N.5, էջ 80-88: Տե՛ս Անա՛ Իстория армянских поселений Подолии. Автореф. Докт. Дисс., Ереван, 1975, с. 32.

191 Տե՛ս Փիրզական Ղափանցու ճամապարհությունը, «Բազմավեց», 1882, թ.4, էջ 318

192 Վ.Բ. Գրիգորյան, Իстория ..., ս. 78.

193 Մ.Բժշկյան, էջ 134-136

194 Տե՛ս Edvard Tryjarski, Ze studio w nad rekopisami i dialektem kipczackim ormian polskich, „Rocznik orientalistyczny”, XIII, Warszawa, 1960, էջ 34

195 Վ.Ռ. Գրիգորյան, Կամենից-Պողոլուս..., էջ 26:

196 Նոյն տեղում, էջ 28: Հմտ. Ե. Севинский, Исторические свидания... 75.

197 Տե՛ս Sadok Baračz, Նշվ. աշխ., էջ 94:

198 Գեներալ-լեյտենանտ Յան (Հովհաննես) Դավիդը եղել է ընչազուրկ հայի զավակ: Դոկտոր Յ.Անառնին, իիմք ունենալով Նիմցովիչի վկայությունը, Եերքոնիշյալ աշխատության մեջ գրումէ: „Jan Witte...syn ubogiego ormianina.... Dr j. Antoni, Zameczki Podolskie na kresach Mślitanskich. T.II. Kamieniec nad Smotryczem. Warzawa, 1880. t. 2, str. 68-72 98 106. Յան Դավիդը եղել է նաև ճարտարապետ: Նրա նախագծով և մասնաւրումով կառուցվել է Լ.վովի դումինիկան փառաթեղ տաճարներից մեկը, որ կանգուն է առ պատր քաղաքի կենտրոնում՝ Հայկական փողոցից ոչ հեռու: Յան Դավիդի ժառանգները մեսագայում գրվեցին Վիտ, Վիտուն, դե Վիտուն:

199 Բազմաթիվ ավամդություններ են պահպանվել Յուլգեֆ Վիտունի և գաղեցկուի Սոֆյայի (Բետուալյում) իշխանութիւն Սոֆիա Պոտոցկայա երիտասարդ տարիների սիրային արկածների մահին: Պատմում են, թե ինչպես Յան Դավիդի տաճը ալայսմություն անու Սոֆյային պատաճի Յուլգեֆը փոխանակում է Խոստինի ամրոցի թուրք փաշայի ձիու հետ:

Հտուտանի Յան Սոբեսկի թագավորը 1685 թ. հունիսի 6-ին արձակած հրովարտակում նշում էր. «...Պետք է, որ մենք հիշենք հայ ազդին պատկանող մարդկանց կտրիճությունն ու քաջադոր ծությունը, որ նրանք ցույց են ավել այնքան դարեր տևող մեր համակեցության ընթացքում Կամենիցի. Թողովեցի և Լվովի, ինչպես նաև մյուս սահմանային բերդերի պաշապանության դորժում»<sup>200</sup>:

Մասենադրական վկյայություններ են պահպանվել Կամենիցի հողերոր օջախների և հասարակական ներքոհիշյալ կառույցների մասին<sup>201</sup>: Նախապես նշենք, որ Սադոկ Բարդունչը<sup>202</sup> և ուրիշներ (Դ. Այարչինսկի, Տ. Գրոմնիցի, Ա. Թու-Ռոլե և այլք), հենվելով ըանավոր զրույցների վրա, դունում են, որ Կամենիցի հայությունը եկեղեցի է ունեցել դեռևս 1250 թվականին<sup>203</sup>: Սակայն առավել հայտնիները եղել են հետեւյալները.

1. Ա.Նիկոլոյոս Եկեղեցի: Կառուցվել է 1398 թ., Սինան Խութլուրեյի միջոցներով<sup>204</sup>: Նպաստավորողների ցանկում տարրեր տարիներին հիշատակվում են Էմին պեյր, պարոն Միտկոյի որդի եղուական պեյր (1522 թ.) և ուրիշներ<sup>205</sup>: 1577 թ. նորոգման աշխատանքներին նյութական միջոցներով մասնակցել է Լվովի Ս.Աստվածածին եկեղեցու զանդակասունը կառուցող մեծահարուսա Անդրեաս Կտֆայեցին<sup>206</sup>: Ս. Նիկողայոսը քանից վերանորոգում է Կամենիցի գատավորներից Միխնոն, որ ծախսերը հոդալու համար դիմել էր Խոջա Անդրեասին<sup>208</sup>: Ժամանակին Ս. Նիկողայոսի պատերին ագուցված են եղել մարմարակերտ սալաախտակներ<sup>209</sup>: Դ.Ալիշանը նշում է. որ այս եկեղեցում է պահպել Սինան Խութլուրեյի դիմանկարը «Սինան՝ որդի Խութլուրեյի. Պիէ (1398)» մակադրությամբ<sup>210</sup>:

2. Գրիգոր Լուսավորիչ. դանշելիս է եղել Հայկական շուկայի հարավային կողմում, Հրկիպավել և ոչնչացել է<sup>211</sup>:

3. Ա.Աստվածածնի իերարիոխման եկեղեցի. քանդվել է 1672 թ. թուրքերի ոմրակոծության ժամանակ<sup>212</sup>:

4. Ա.Ասեիփանոս նախատիկա. կործանվել է վերոհիշյալ թվականին. նույն պատճառով:

5. Ա.Խուտ. Կառուցված է եղել քաղաքից դուրս հայապատկան կալվածում<sup>213</sup>: Օդսենա Կա-

200 Վ.Դ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլյակ..., էջ 36 Իստորիա..., ս. 60

201 Մանրամասն տես C.Շկորկո, Արմանական պատմություններ Կամենեց-Պոդոլյակ, ԻՓԺ, 1968, N.2 ս. 233-243.

202 Sadok Barącz, Rys Dziejów ormiańskich, str. 92.

203 Վ.Ր. Գրիգորյան, Իստորիա..., ս. 55.

204 Մ.քժկյան, էջ 141:

205 Նույն տեղում:

206 Նույն տեղում. էջ 144:

207 Sadok Barącz, Cudownie obrazy Matki Najświętszej w Polsce, Lwow, 1891, str. 103. Ե. Սացինսկի, Исторические сведения о приходах и церквях Подольской епархии. 1. Каменецкий уезд. .. Труды подольского епархиального историко-статистического комитета., вып. 7 , Каменец -Подольский, 1895, с. 79.

208 Վ.Ր. Գրիգորյան, Իստորիա..., ս. 78.

209 Նույն տեղում:

210 Դ.Ալիշան, Կամենից, էջ 132-133:

211 Վ.Ռ. Գրիգորյան, Կամենեց-Պոդոլյակ ..., էջ 28:

212 Նույն տեղում:

213 Դ. Ալիշան, Կամենից, էջ 72:

**մենիցացու վկայությամբ այրվել է թաթարների կողմից, 1613 թ.<sup>214</sup>:**

6. Ս.Աստվածածիր ավեաման եկեղեցին այժմ կանդուն է. այն դանվում է Ս.Նիկողայոսից շուրջ 30 մ հեռավորությամբ դեպի Հարավ-արեելք: Կառուցվել է 1522թ.: Մասենադըական աղբյուրների Համաձայն այսաեղ է թաղված դեպի Հռոմ 1626 թ. ճամփորդելու մեկնած Մելիքսեդեկ կաթողիկոսը<sup>215</sup>: Սյս դողարիկ կառույցի ներսում է զեաեղված այժմյան քաղաքային արխիվը:

7.Կուսանուզ. զանմելիս է եղել վերոհիշյալ եկեղեցու րակում: Կառուցվել է 1600 թ. Գրիգոր եպիսկոպոս Վարագեցու ջանքերով<sup>216</sup>:

8. Եպիսկոպոսարան. Գանվելիս է եղել Ս.Նիկողայոսի րակում<sup>217</sup>:

9. Դպրուտուն. այրվել է 1602 թ., վերանորոգումն ավարավել է 1604 թ. Նոյեմբերի 8-ին, պարոն Տոնուշի որդի Միխնո երեցիոխանի վերակացությամբ<sup>218</sup>:

Սարու անուն առ անուն կթվարկենք այն պաամական հուշարձանները, որոնք հասել են մինչև մեր օրերը: Սմիփելով նշենք, որ Կամենիցի Հայ Համայնքը երկարաակ, համառ պայքար մղեց իր աղդային դիմագիծը պահպանելու համար, սակայն ժամանակի անրարենպասա իրադըությունը և հաակապես Հռոմի պապի դորժակալների և ունիթոոների խժդժությունները պատճառու: Հանդիսացան, որ ասաիճանարար մարեր շաաերի մոռա ադրային ինքնաղիսակցության դդցումը: Թագուրքի որդի Նիկոլ Թորոսովիչ եպիսկոպոսը 1652 թ. ընդունեց կաթոլիկություն. 1666 թ. Հոկամբերի 1-ին ժամերդությունը կաաաըվեց լաաինական-կաթոլիկական ծեսով, թեե մինչե 1689 թ. դոյություն ուներ այսաեղ Հայ-լուսավորչաղավան եպիսկոպոսը<sup>219</sup>: Մայըենի դպրոցները փակվեցին և ապա լուծարման ենթարկվեց Հայոց ավանդույթներով ապըող երրեմնի ծաղկուն այս դաղթօջախը:

Հայկական պաամական հուշարձաններից այժմ Կամենեց-Պոդոլսկում պահպանվել են.

1. Հայկական ջըհորը- 1638 թ.(Կենարոնական հրապարակում, նախկին քաղաքապեաարանի մոա).

2. Սեֆեր Հովհաննեսովիչի առւնը -1735 թ. (Կենարոնական հրապարակ, 5).

3. Հայկական Ն.Զայկովսկու առւնը- XVIII. դար. (Կենարոնական հրապարակ, 10).

4. Քաղաքապեաւս Բալասանովիչի առւնը- XVIII.դ. (Ա.Բերելի փ.5).

5. Հայկական առւն- XVIII.դ. (Ա.Բերելի փ. N.2).

6. Ցակուր Լեռնովիչի տունը-1646 թ. (Խորհրդային հրապարակ, N.7).

7. Զինվորական նահանդապեա դեներալ Թան Դավիդի առւնը-XVIII.դ. (Խորհրդային հրապարակ, N.10, այժմյան Հրշեցի խմբի շենքը).

8. Հայոց Խորհրդարանի նկուդահարկերը XVII.դ. (Թան դը Վիաաեի աան և դպրոցի արանքում).

214 Նույն տեղում:

215 Նույն տեղում:

216 Վ.Ռ.Գրիգորյան Կամենեց-Պոդոլսկ.... էջ 28:

217 Մ.Բժշկան էջ 140:

218 Նույն տեղում:

219 Նույն տեղում էջ 40: Լամենեցի պատմական հուշարձանների մասին տե՛ս И.С. Винокур, Г.Н.Хотюн, Каменец-Подольский гос.историко-архитектурный заповедник, Львов, 1981. Каменец-Подольский историко-архитектурный заповедник. сост. А.И.Качуровский, О.Н. Винюков, В.И.Донец и др. Киев, 1984 (на укр. яз.).

9. Ս.Մարիամ եկեղեցու հիմնապատերը - XVII դ., այրվել է 1604 թ.(Գողովի կ., 2).
  10. Հայկական երկհարկանի տուն XVII դ. (Գոսպիտալնալա 1).
  11. Հայկական հիվանդանոց- XV-XVII դդ. (մինչև 1614 թ. փայտաշեն, Գոսպիտալնայա N.3).
  12. Հայազգի Հովհաննեսի տունը - 1620 թ. (Գոսպիտալնայա 4).
  13. Հայկական տուն՝ որմնանկարներով - XVII դ. (Գոսպիտալնայա N.6)
  - 14: Հայկական տան հիմնապատեր - XVII դ. (փլուղվել է երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ).
  15. Հայկական շուկա XV. դ. (այժմյան Խորհրդային հրապարակը).
  16. Հայկական աշտարակ - XVI դ. (շրջորոճկոմի բակում).
  17. Հայկական առևտուրական ըորսան - XV-XVII դդ. (այժմ վերանորողված).
  18. Ս.Նիկողայոս եկեղեցու պորտալը - (եկեղեցին քանդվել է 1936 թ.)
  19. Ս.Նիկողայոս եկեղեցու զանդակառունը<sup>220</sup> XVI դ. (այժմ՝ վերանորողված, ինտերյերի պատերին հայտնարերվել են որմնանկարներ)
  20. Հայ միանձնութիների մատուռ - XVII դ. (շուրջը՝ գերեզմանոց).
  21. Հայ հոգեռականության ընակելի շենքը - XVIII դ.
  22. Հայկական փողոցը (այժմ՝ Յա. Ավելիովի փող.).
  23. Ս.Գևորգ վանքը - 1706 թ. (Ռ.Լյուքսեմբուրգի փող. 25).
  24. Ս.Ստեփանոս մատուռ - XVI դ. (այժմ՝ կործանված) և այլն<sup>221</sup>:

Կամենեց-Պողոսկից պրակում զետեղված 21 արձանադրությունները հայերեն են, մասամբ լատիներեն և լեչերեն, որոնցից մի քանիսը 1830թ. հրատարակել է Մ.Բժշկյանը: Ահա դրանք.

575. Տապանաքար, սղիտակ մարմարից, քանդակաղարդ. վերին աջ և ձախ կողմերը քայքայված: Այժմ գտնվում է քաղաքի երկրագիտական թանգարանի ցուցասրահում: Մի կողմին՝ Յ առջ:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ՀՈԹԵՆԻ ՈՐԴԻ ՍՈՂՕՄՈՆԻ ԿՕՂԱԿԻՑ ԳՈՒԼԻԳԻՆ, ՈՐ  
ՓՈԽԵՑԱԱԻ Ի ԿԵԱՆՍ ԹՎԻՆ ՌՄԺԲ (1763)-ԻՆ:

Ծանոթ. Հոթենր Հարությունի բարրառային ձևն է:

Гршшп. Кучук-Иоаннесов, Древности Вост. т. II с. 48.

576. Տապանաքար, սպիտակ մարմարից, գեղաքտնգակ ըուսական դարգերով: Նախապես դանզելիս է եղել Ա. Նիկողայոս եկեղեցու մուտքի մոտ<sup>222</sup>: Արձանագրաւթյան տակ պատկերված է ծաղկաման, որի կողքերից վեր են խոյանում նոճու ղույգ ծառեր: Վիմագրված է 14 տող ուժիթմիկ ուսանափոր.

**220** Զանգակատունը վերջերս նորողվեց ճարտարապետ Ա.Դ. Տյուպիչի նախագծով. դա քառամբեթ բազմաբարձր կառավագանցին ու ճարտարապետության համար:

**221** Հայոց պատմության և հայության ու հայության:

222 В.Р. Григорян. История с. 78

ՇԻՐԻՄՍ ԱՅՍ ԷՐ ՊԱՀԱՐԱՆ  
ՄԱՐՄՆՈՅ ՍՈՐԻՆ ԺԱՄՈՒՄԱՀ-  
ՎԱՆ,

ԶԻ ՍԱ ԷՐ ՄԵԾ ՎԱՃԱՌԱԿԱՆ.  
ՈՎԱՆԿՍ ԱՅՍ ԱԶՆՈՒԱԿՎԱՆ:  
ՍԱ ԷՐ ԵՐԿՐԵՆ ՓԱՐՍԻՍԿԱՆ  
ԵՐԵՒԱՆՈՒ ՄԵՐՉ ԳԻՒՂԱԿԱՆ,  
ՔԱՆԱՔԵՌՈՒ ԱՆՈՒԱՆԿԱՆ  
ՏԱՆԵ ՈՐԴԻ ԲԱՐԱՂԱՄԵԱՆ.  
ՍԱ ԷՐ ԵՂԵԱԼ ԵՐԵՍՆԱՄԵԱՆ,  
ՅՈՐՃԱՄ ԷՀԱՍ ԿԵՆԻՆ ՎԱԽ-  
ՃԱՆ.

ՀԱՅՈՑ ՄԵԾԱՑ ԷՐ ԹՎ.Ո.Ճ/  
ԿԶ (1717)-ԻՆ.  
ԱՐԴ ՈՐՔ ԴԻՊԻՔ ԸՍՊՈ/ՍԱԿԱՆ  
ԵՒ ԸՆԹԵՌՈՒՈՒՔ ՍԻՐ/ՈՎ ԱՅՍ-  
ՔԱՆ  
ՄԻ ԽՆԱՑԵՔ ԶՀԱՑՐ ՄԵՂԱՑՆ  
ՀՈԳՈՒՆ<sup>223</sup>

Հրատ. Բժշկյան, 138:

Լուսանկ. 161:

577. Խաչքար, փոքր չափսերի, ագուցված է Աստվածածնի վերափոխման (այժմ  
սխալմամբ կոչում են Ա. Նիկողայոս - Գ. Գ.) եկեղեցու հարավային պատին, արտաքուստ՝  
2 տող.

ԹՎ.Ո.Գ (1554). ՄԲ ԽԱԶՍ... ՅԻՇԱՏԱԿ Է...ՍԻԱՅԻ...

### ԿԱՄԵՆԵՑ-ՊՈԴՈԼՍԿԻ ԵՐԿՐԱԳԻ ՏԱԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Այսաեղ են պահպանվում Կամենիցի XVIII. դարի Հայ դատավորներից մեկի՝ իրավարան Նի-  
կոլայ Զայկովսկու և նրա տիկնոջ՝ Սոֆիայի արծաթե շրջանակների մեջ վերցրած դիմակարները,  
որոնք այսաեղ են բերված այժմ գոյություն չունեցող Հայկական գերեզմանոցից: Նկարների  
հետեներում կան սև մելանով լատիներեն կատարված հետեւյալ դրությունները.

578. Ն. Զայկովսկու դիմանկարի շրջանակին՝

223 Ա.Բժշկյան, 138. Կրատումներով: Х.Кучук-Иоаннесов, Сведения и заметки о старинных армянских рукописях и армянских надписях, входящихся в пределах России /П. Армянская надпись в Каменце-Подольском/. „Древности Восточные., т. IV, М., 1913, с. 10):

Ամենի կողմին. AD 1762:

D. T. O. M.  
PORTRETUM NOBLIS SPBLIS NICOLAI CZAY  
KOWSKI, advocati Cudicis Armen,  
Civitatis Camenecensis Podoliae Ecclesiae  
S. Nicolai PontiE & Conf.  
Pro Perennie Memoria Aplicatum is, idem, vixit  
Annorum d3. obiit  
anno Salutis . 1762, die 14 sblis...  
D.T.O.M.

/PORTRETUM/ NOBILIS SPBLIS NICOLAI CZAY/KOWSKI, ADVOCATI CUDICIS  
ARMEN,/ CIVITATIS CAMENECENSIS PODOLIAE ECCLESIAE/ S. NICOLAI PONTI  
EU CONF/ PRO PERENNIE MEMORIA APPLICATUM IS, IDEM, VIXIT/ ANNORUM ...  
OBIIT/ ANNO SALUTIS

1762. DIE 14 SBIIS...

Թարգմ.

Քեզ՝ Ասածուն, բոլորից ամենահզորին.

Կամենեց-Պոդակի Ս. Նիկոլայոս առաջնորդանիստ եկեղեցու ազնվատոհմ և ականավոր  
հայքագաքացի փաստաբան, իրավաբան (գատավոր) Նիկոլայոս Զայկովսկու դիմանկարը՝ երիտ-  
գած հավերժ հիշատակի համար: Նա ապրեց... տարի, վախճանվեց Տիրոջ 1762թ. սեպտեմբերի  
14-ին:

579. Նկարի եակում նույնպես աւ մելանով գրված է.

Սոֆիա Զայկովսկայայի (Նախաամուսնական ազգանունը՝ Քրիստոֆովիչովա) գի-  
մանկարի արծաթե շրջանակը նույնպես հարուստ է բուսական զարդանախշերով, թեև  
համեմատարար ավելի պարզ է, քան Ն. Զայկովսկունը:

Երջանակի երեսին՝ վերուստ փորագրված է A D (յամի տեառն), ստորև 1768:

D. T. O. M.  
PORTRETUM

Nobilis ac siblis Zophia de Krzysztofowicze, pie  
defuncti Nicolai Czaykowskii Advocati Cudicis  
Armenicivitatis Came Pod, Consortis Vidua Ecclesia S.  
Nicolai Pontificis 8c. conf: properenni Memoria  
Aplicata tum: Vixit Annorum 60 obiit Anno  
Salutis, 1768 die 4ta Aprilis.

D.T.O.M./  
PORTRETUM/

NOBILIS AC SIBLIS ZOPHIA DE KRYSZTOFOWICZE,/ PIE DEFUNCTI NICOLAI CZAYKOWSKI ADVOCATI LUDICIS/ ARME CIVITATIS CAME/ POD, CONSORTIS VIDUA ECCLESIA.S./ NICOLAI PONTIFICIS 8C. CONF:/ PROPERENNI MEMORIA/ APPLICATUM: VIXIT ANNORIZM 60 OBIIT ANNO/ SALUTIS, 1768 DIE 4 TA APRILIS.

Թարգմ.

Քեղ՝ Աստծուն բոլորից ամենահղորին.

Կամենեց-Պոդլսկի վախճանված փաստարան, իրավարան (դատավոր) Նիկողայոս Զայ-էռվակու այրի, Ա. Նիկողայոս առաջնորդանիստ եկեղեցու հայ հավատացյալ Սոֆիա Քրիստոֆովիչ դիմանկարը՝ երիզված հավերժ հիշատակի համար: Ապրեց 60 տարի. վախճանվեց Տիրոջ 1768 թ. ապրիլի 4-ին<sup>224</sup>:

580. Տապանաքար, կրաքարից, գլխավերևում՝ թևավոր խաչ: Երըորդ տողի շարունակությունը եղծված է: Հայանարերվել է Ա. Նիկողայոս եկեղեցու աարածքի պեղումներից: 12 առղից վերծանվում է:

Ա.ՅՍ. Է ՏԱ.ՊԱՆ ՀԱՆԳՍԵՆԻ/ Ի ՑԵՐԿՐԵՆ Ա.ՐԵՒԵԼՑԻ/ Ի Գ.Ա.Ի.Ա.ՐԵՆ ՆԱԽԶՎԱՆՑԻ/ ԵՒ Ի ԳԵՂՁԵՆ ՄԱՍԸԸԸՎԱՆՑԻ...ԸՆԹԱ.ՅՔ..., ՈՐ ՓՈԽԵՑՍԻ ԿԵՆԱՅՍ Ա.ՍՏԻ ԹՎԻՆ ՌԲՃԻԳ (1774)... Ա.ՊՐԻԼԻ ԻԱ. (21):

Մանոթ. Մասրվան (Մասրեվան) դյուղը գտնվում է պատմտկան Գողթն դավառում. այժմյան Օրդուրադի շրջանի նասրվաղ դյուղն է:

581. Արձանագրության բեկոր. վրան՝ 3 առղ.

...ՌԱ.ԻՆ.../ Դ.ՊՈԽՍՏՐ ԲԵԹՐԻ/ ՍՆ ԵՒ ԿԵՆԱԿԻՑ...

Լուսանկար, 162

582. Խաչքարի բեկոր, կրաքարից, բուսական և երկրաչափական դարգերով: Արձանագրությունը ձախքը կոտրված մասում է: Ընթերցվում է.

...ԽԱ.Զ...Ա.Ի.Գ.Ն.ԵԱ.Ց]. ԹՎԻՆ ԶՂԵ(1548):

Մանոթ. Լուսանկարը մեղ տրամադրել է ճարտարապետ Ե. Մ. Պլամենիցկայան:

583. Տապանաքար, կրաքարից, շրջված վիճակում գրված է և. Նիկողայոս եկեղեցու նկուղահարկի սենյակներից մեկի ծածկի մեջ: 12 առղից հնարավոր է ընդօրինակել 8-ը:

C. L. NIOWROWM /ZOROWZ KTORY CHMIC/...RZEZYWSZYTAT/...

KOKITIZ 40 DG MPZGLUAPRZENIOS.../ SLEDCNIESMIEB TRINESCI MARI.../ NAZASSKE NG WSZY LAT 40 D 2/ MARCA ROKI 1777...


Թարգմ. ....որն ապրեց 40...գնաց դեպի անմահություն...ապրելով 40 տարի. (մահացավ) 1777 թ. մարտի 2-ին:

224 Բնագրից թարգմանեց Միսիթար Հերացու անվ. Բժշկական համալսարանի դոցենտ Հ. Թ. Առաքելյանը:

584. Տապանաքար, կրաքարից. նույն աեղում աղուցված է ժածկի շարվածքի մեջ:  
Ակիղբը և շարունակությունը եղծված են: Կարդացվում է 6 առղ.

ZWLOHISZL  
CABRYELA I  
ANNY BOGDA  
NOWICZOW  
MAŁZAKOW  
RADCOWMIA  
STAKAMIEN.  
CAPODOL:  
IKOSZAO  
—III SKIE  
---IL---

585. Տապանաքարի բեկոր, կրաքարից: Վերին մասը ջարդուաված է. ընթերցվում է  
կիսեղծ 5 առղ.



...ZWLO... GABRYELA I /ANNY  
BOGDA/NOWICZOW MALZAKOW/  
RADCOW MIASTA / KAMIEN/CA  
PODOL...

Թարգմ. ...աճյունները Գարրիել և  
Աննա Բոդզանովիչ ամուսինների. Կամենեց-  
Պոդոլսկի քաղաքային խորհրդարանի ան-  
դամների...

Մանոթ. Նկատի է առնված այն պա-  
րագան, որ Գարրիել Բոդզանովիչը կամենի-  
ցահայության ինքնավարության վերացու-  
մից հետո(1787թ.) ընարած է եղել քաղաքա-  
յին խորհրդարանի անդամ:

...ATC.../WOYTA NACYI  
ORMIEN/SKIE YCLATO/  
IKOSCI ZILO/ ...NE R. 1732.

Թարգմ.

...(Ասա հանդչին) ոսկորները  
հայոց աղդի վոյթ (դասա-  
վոր)...(մահ.) 1732թ.

Մանոթ. Լուսանկարը մեղ  
տրամադրել են Ե. Պլամենիցկա-  
յան և Ա. Տյուպիչը, որոնք հայա-  
նարերել են պեղումների ժամա-  
նակ:

1984թ. վերջերին Կամենեց-Պոդոլսկի և Նիկողայոս եկեղեցու զանգակաաան հաաակից գանձախույզները հայանարերել են մեծարժեք գանձ. եկեղեցական սրբազն մասունքներ (խաչեր, սկիռներ, մասնապահարաններ, սափորներ, խույրեր), ճարմանգներ, շղթաներ և այլն, որոնք պատրաստված են աարեր ժամանակներում՝ հիմնականում ոսկուց և ընդելուզված են թանկարժեք քարերով(ազելի քան 400 նմուշ): Դրանց մեջ կան նաև այնպիսի իրեր, որոնք ունեն հայերեն և լեռներեն արձանագրություններ:

Կամենեց-Պոդոլսկի քաղաքորհուրդը և միլիցիայի բաժանմունքը թույլ ավեցին պրոֆեսորներ վինոկուրի, Բաժենովի և երկրագիտական թանգարանի աշխատակիցների ներկայությամբ ծանոթանալ գանգված իրերին: Մեզ համար կարենոր արժեք էին ներկայացնում հեակյալ արձանագրությունները.

586. Անհայտ արծաթյա. ոսկեջրած, պաավանդանի ստորև՝ շրջանաձև.

ՅԼԻ ՀԸՆՍԼԱ.ԼԿ Է ՍԿԻՀՍ ՊՐԵՍՎԻԼԱ.ԽՆԻՆ. ՇԻՆԵՑԱՒԹՎ. Ո.Լ (1581):

Մանոթ. Միխնո երեցփոխանը պարոն Տոնուշի որդին էր, որ 1604թ.նորոգել տվեց Կամենիցի հայոց գպրաաունը: Արձանագրության սկզբում արված է նվիրատուի առհմանշանը, որի վրա ընթերցվում են լատիներեն M(Միխնո) T(Տոնուշ) աաոերը: Միխնո երեցփոխանը հիշված է իրեն գատավոր և պաաասխանող 1574 թ. փետրվարի 16-ին Կամենիցում աեղի ունեցած հայկական գատարանի նիստերից մեկի ժամանակ<sup>225</sup>: Նա բազմաթիվ նվիրաավություններ է կաաարել էջմիածնին, Կամենիցի, Լուսի, Զամոսայեի, Կիւի, Լուսի հայոց եկեղեցիներին և հայ հոգեորականության առանձին ներկայացուցիչներին<sup>226</sup>:

587. Ոսկեծույլ սիրա, որի կենտրոնական մասում փորագրված է 5 տող.

DO KOŚCIOŁA ORMIĄŃSKIEGO DO MATKI BOSKIEJ/ FUNDACJI EMILY DE/ YLICAL Z POZA/TOWSKICH DNIA 30 SIERPNIA/ 1855 ROKU/ WAZY 81 3/4 ZOŁOTNIKÓW.

Թարգմ.

Հայոց Ասավածամայր եկեղեցուն՝ Պողատովսկիներից (Պոժատովսկիներից) էմիլիայի նվիրաավությունը. 1855 թվականի օգոստոսի 30-ի օրը: Կշռում է 81 3/4զոլոանիկ:

Մանոթ. Մեզ զոլոանիկը հավասար է 0,4265 գրամի, ուստի այս մասունքը կշռում է 34,87 գրամ ոսկի:

588. Հայկական ջրհորի մուտքի պատին ագուցված ցուցանակին՝ ուկրաիներեն 3 տող.

ВІРМЕНЬСКИЙ/ КОЛОДЯЗЬ./ 1638.

Թարգմ. Հայկական ջրհոր 1638:

Արձանագրություններ, որոնք ալժմ տեղում չկան

589. Ա. Նիկողայոս եկեղեցու մերձակայքում կառուցված շենքի ծածկագերաններից մեկի վրա.

225 Վ.Ռ.Գրիգորյան, Կամենեց-Պոդոլսկ..., Էջ 214-215

226 Տե՛ս Հ. Ռաբա, Общественно-политическая жизнь армянской колонии в Каменце-Подольском /XVI-XVII вв/ ИФЖ, 1976, N 4 с. 110.

Ա. ԳԻՐԱԿԱՆՈՒԹԵԼԻԱՄ յթ Հօր ամենակալի եւ թելադրութեամ յթ Որդոյն Միածնին սուսցաւ զառունս դայս պլը. Ծառուկն որդի Խաչերեսին ի վայելումն անձին իւրոյ եւ զաւակաց իւրոց. ԱՌ բարով վայելել ատացէ. ամէն: Թվ. Հայոց ՌՀԴ (1625), մարտի ամսո ԺԵ (15):

Հրատ. Բժշկյան, 154-155:

590. Նույն առան առաջին սենյակի առասասազի գերանին.

Երանեոլ է ալը, որ երկնչի ի ՏԵառնէլեւ դնայ ի ճանապարհս նորա. ղվաստակս ՃԵ-ռաց քոց կերիցես: Երանի է քեզ եւ բարի եղիցի կըն քո որպէս այգի վայելուչ յանկիւնս տան քո որդիք քո:

Անուն ԱՅ շինեցաւ տունս ի վայելումն պլը. Կիւրեղին. որպէս նորաաունկ Ճիթենւոյ շուրջ ոսեղանով քով. այնաէս աւրհնեսցի ամենայն մարդ, որ երկնչի ի ՏԵառնէլ տեսցէս դու զորդիո որդւոց քոց խաղաղութիւն ի վերայ ելի:

Հրատ. Բժշկյան, 154-155:

591. Հայոց Արևտրի աան գուտն ըարավորին.

Զօրութիւն իմ եւ օդնութիւն իմ ՏՐ. եւ եզեւ ինձ փրկութիւն... պլը. Յովաննէս շինել ետուր, զի կեր... թվ. ԽԿԹ (1620):

Ծանոթ. Արձանագրության ապակետիպը գտնվում է Լվովի գիտական թանգարանում (տե՛ս կֆ. 00796):

Հրատ. Բժշկյան, 154, Կոչոկ-Իօաննեսօվ, 49.

592. Բնակելի մեկ այլ աան ճակաաին.

Ա. Ճատուր որդի ՏՐ Պետրոսի. թվ. ՌԼ (1581):

Հրատ. Բժշկյան, 154:

593. Առաստազի գերաններից մեկի վրա.

Ի թվ. ՌՀԴ (1725):

Հրատ. Բժշկյան, 154:

594. Բնակարաններից մեկի մուաքին.

Անուսմբ Ածային ի վայելումն պլը ՄԵԼՔոին:

Հրատ. Բժշկյան, 155:

Ս. Նիկողայոս Նկեղեցու զանգակատուն

Զանգակատան կառուցման աշխատանքներին մասնակցել են Կամենիցի Հայ Համայնքի բոլոր անդամները: Նպաստավորողները եզել են պան Հրիհորը (Գրիգորը) Զատիկի որդին և նրա կին Աղիկը: Զուլածո զանգերը նվիրել են Խաչատուր Եպիսկոպոսը և վերոհիշյալ Գրիգորը (մահ. 1565թ.)<sup>227</sup>:

595. Զտնգակատան պատին ագուցված սև մարմարե սալաքարերին փորագրած է

Եղել հետևյալ րանասաեղծությունը, որն իր այցի ժամանակ վերծանել է Մ. Բժշկյան։  
Յս Որդի Հօր միաժին,  
Որ բարձրացար վերայ խաչին.  
Վս Աղամայ նախասաեղծին,  
Եւ ամենայն զարմից նորին.  
Մարմնովդ եղար գերեզմանին,  
Հոգւովդ իջեր դժոխք ներքին,  
Զաւարն առեր բգերողին.  
Եւ դարձուցեր առ հայրենին.  
Աղասեցեր զԱդամըն հին,  
Եւ ընդ նմին բզծնունդ նորին,  
Որ էր մեռեալ համանդամայն,  
Զգեցուցեր դիառս առաջին.  
Նոյնպէս շնորհեա և ար սոցին,  
Զուաճարս այս շինու առւողին.  
.....իսու փիրզատային.  
.....  
Որ հարազատ ռու անուանին,  
Պղորմեսցի .....րու երկր.  
Այլև կանանց հոդո սորին,  
Մարուխնային, Թուրվանուային.  
Եւ ամենայն ծննդոց...  
Զի ի հալալ արդեանց գանձին,  
Ետուն իւրեանց յղձմամբ սրաին.  
.....  
Այ.....  
.....յս աշտարակին.  
'Ի յօդնութի այս մեծ ծախին,  
Ընծայեցն զո՞մ...իլին.  
Վս Հոգւոյ իւրոց ծնողին.  
Զոր տրն դասէ խորանս վերին.  
Ով ոք .....  
Ասասցէ զար ողորմին.  
Նորա յանցանքն միշտ քաւեսցին,

Ի թվին Ռ. Հայոց մեծին.  
 Զը թիւ առելին,  
 Յորժամ զսա կտրդ.....  
 .....  
 Ղ.կութեն ար Մովսիսին.  
 Ա.թոռապահ սը Գրիգորին.  
 Եւ բարեպաշ.....որջորջին.  
 Յինչն նորոգ բանո այս լիցին,  
 Պասճառ բնաւի.....  
 .....  
 ...լոկ անուամբ երէց կոչիմ»:

Մանոթ. Ինչպես տեսնում ենք, զանգակատունը կառուցվել է Հայոց Ո.ԶԲ(1633)թվականին, Մովսես Խոանանցի կաթողիկոսի մահվանից առաջ: Այժմ վերանորոգված է ուկրաինացի ճարապեա Ա. Դ. Տյուպիչի նախագծով:

Հրատ. Բժշկյան, 138-139:

596. Ա. Նիկողայոսի մոա եղած տապանաքարերից մեկի վրա եղել է Հեաևյալ արձանագրությունը.

Թու. ԶՂԲ (1343). Վախճանեցաւ եւ թաղեցաւ պան Յակոբը՝ Ամիրջանի որդին<sup>228</sup>:

## ԺՎԱՆԵՑ

Դնեստր գեաի ափին հիմնագրված այս գեղասեսիլ փոքրիկ քաղաքը վսրչատարածրային բաժանմամբ այժմ մտնում է Խմելնիցկու մարզի Կամենեց-Պոգոլսկի շրջագծի մեջ, շրջկենարոնից ընդամենը 24կմ հեռավորությամբ գեաի հարավ-արևմուտք: Հայերն այսաեղ եկել են Մոլգովայից և Վալաքիայից, XVII դարի 70-ական թվականներին<sup>229</sup>: Գաղութի ծաղկման ժամանակ եղել են 100 տուն հայեր<sup>230</sup>. Նախապես ունեցել են փայտաշեն եկեղեցի, որի փոխարեն հոգևոր հովիվ Գրիգոր Գանկաչի նախաձեռնությամբ կառուցում են ս. Գրիգոր անունով քարաշեն աաճար<sup>231</sup>: Օծումը աեղի է ունեցել 1791 թ. նորոգումից հետո<sup>232</sup>: Ճարաարապեական Հորինվածքով ս. Գրիգորը կը ել է եվլոպական վերածնության կնիքը: Մ. Բժշկյանի օրոք (1820-ական թթ.) Ժվանեցի հայկական եկեղեցին անցել էր լեհերին, և հայ համայնքն արգեն ենթարկվել չը ուժացման<sup>233</sup>:

Այսաեղ են թաղված Ժվանեցի շաա հայորդիներ, ընդ որում նաև Գրիգոր Գանկաչը<sup>234</sup>:

228 Ա. Սուրենյանց, ճանապարհորդութիւն դեպի Խերսոնի նախանգ, Բնապարիա և Պոդոլիա. «Մասնաց աղավնի եւ ծիածան Հայաստանաց», Թեոդոսիա, 1863, օգոստոս 1, էջ 246:

229 Վ.Ր. Գրիգորյան, Իстория..., 138-139.

230 Մ. Բժշկյան, էջ 131-132:

231 Վ.Ր. Գրիգորյան, Իстория..., ս. 139.

232 Մ. Բժշկյան. էջ 132-133, 134:

233 Վ.Ր. Գրիգորյան, Իстория..., ս. 114.

234 Տամ же, ս. 139.